ՏԵՂԵԿԱՆՔ

վավերացման նպատակահարմարության մասին

«Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության նպատակն է լրացումներ կատարել 2005 թվականի մայիսի 16-ին Վարշավայում ստորագրված «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում, որով նախատեսվում է քրեականացնել Արձանագրության 2-6-րդ հոդվածներով սահմանված հետևյալ արարքները՝ ահաբեկչության նպատակով որևէ միավորման կամ խմբի մասնակցելը, ահաբեկչության նպատակով ուսուցում ստանալը, ահաբեկչության նպատակով արտերկիր մեկնելը, ահաբեկչության նպատակով արտերկիր մեկնելը ֆինանսավորելը և ահաբեկչության նպատակով արտերկիր մեկնումը կազմակերպելը կամ այլ կերպ դրան օժանդակելը:

Արձանագրությունը նպատակահարմար է վավերացնել՝ ելնելով միջազգային մակարդակով՝ «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում թվարկված արարքների քրեաիրավական ձևակերպումները սահմանելու անհրաժեշտությունից, ինչը կնպաստի ահաբեկչության դրսևորման բոլոր ձևերի կանխարգելմանը, մարդու իրավունքների, մասնավորապես կյանքի իրավունքի վրա դրա բացասական հետևանքների կանխմանը, ինչպես նաև առավել կիամախմբվի ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում Կոնվենցիայի Կողմ պետությունների ջանքերն ու կխորացնի նրանց արդյունավետ փոխհամագործակցությունը:

**Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ:**

Նախագիծը չի առնչվում Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. ծրագրի, ոլորտային և/կամ այլ ռազմավարությունների հետ:

Ազգային անվտանգության ծառայություն

# ՏԵՂԵԿԱՆՔ

պատասխանատու մարմինների վերաբերյալ

«Ահաբեկչության դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն՝ «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության կատարման համար պատասխանատու մարմիններ են հանդիսանում.

1. Ազգային անվտանգության ծառայությունը,

2. Ոստիկանությունը,

3. Պաշտպանության նախարարությունը:

Ահաբեկչության դեմ պայքարին օրենքով ամրագրված իրենց լիազորությունների սահմաններում մասնակցում են նաև պետական կառավարման համակարգի մյուս մարմինները:

Ազգային անվտանգության ծառայություն